

«Կրթասեր» հասարակական կազմակերպություն

Անվանակարգը. Հակածխախոտային քարոզարշավ

Ծրագրի անվանումը. «Ես չեմ ուզում ծխել»

ա) Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրում ընդգրկվելու են Մալաթիա-Սեբաստիա համայնքի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի բոլոր դպրոցների(Բ-1` (Բաբաջանյան 47-1), Բ-4` (Բաբաջանյան 38-1) թաղամասերի Նախակրթարաններ, Գեղարվեստի վարժարան (Րաֆֆու 69-1), «Մայքլ Գանյան» միջնակարգ դպրոց (Իսակովի 52-6), Վարժարան, Նոր դպրոց (Բաբաջանյան 25), Արհեստագործական դպրոց (Անդրանիկի 92-1)) 4-10-րդ դասարանցիները, նրանց ծնողներն ու հարազատները, մանկավարժական կոլեկտիվը: Կպատվիրվի «Խանգարո՞ւմ է արդյոք ծխողը շրջապատողներին» թեմայով հարցում, որի արդյունքների վերլուծությունը կիրառարակվի կրթահամալիրի կայքում (www.mskh.am): Կրթահամալիրի և Մալաթիա-Սեբաստիա համայնքի դպրոցներում անցկացվելու են զրույց-քննարկումներ՝ հրավիրված հոգեբանի և սոցիոլոգի մասնակցությամբ, ուր կքննարկվեն նաև անցկացված հարցման արդյունքները: Կազմակերպվելու է երթ՝ համայնքի փողոցներով՝ «Ես չեմ ուզում ծխել» կարգախոսով և համապատասխան պաստառներով: Երեխաների և նրանց շրջապատող մեծահասակների ուժերով պատրաստվելու և կրթահամալիրի կայքում տեղադրվելու է նաև հակածխախոտային գովազդ:

Պատվիրվելու են հակածխախոտային մակագրությամբ գրիչներ, տետրեր և այլ դպրոցական պարագաներ /հուշանվերներ, որոնք կբաժանվեն առավել ակտիվ մասնակցություն ցուցաբերած աշակերտներին: Կտպագրվեն հատուկ պաստառներ՝ “Ծխախոտի վաճառքը մինչև 18 տարեկան անձանց արգելվում է ՀՀ օրենքով” բովանդակությամբ:

Պաստառները երեխաների կողմից երթի ընթացքում կփակցվեն երթի տարածքում գտնվող վաճառքի կետերում, խանութներում և սուպերմարկետներում, այնուհետև՝ քաղաքի տարբեր խանութներում: Աշակերտների, նրանց ուսուցիչների մասնակցությամբ կպատրաստվի և “Հայ TV” հեռուստաընկերությամբ եթեր կհեռարձակվի հակածխախոտային գովազդային հոլովակ:

Ծրագրի ընթացքում կանցկացվի երկու սոցիալարցում՝ աշակերտների և ուսուցիչների /ծնողների մասնակցությամբ:

Ծրագրի ընթացքում կնկարահանվի հետաքննական ֆիլմ, որը կուսումնասիրի դպրոցահասակ երեխաների ծխելու նախապայմանները, վիճակագրությունը և հետևանքները: Ֆիլմի նկարահանումներին կմասնակցեն հանրապետության լավագույն մանկավարժները, հոգեբանները և բժիշկները: Նկարահանումների ընթացքում կկիրառվեն թաքնված տեսախցիկի, “թաքնված հերոսի”, սեփական հետաքննության և այլ հետաքրքիր մեթոդներ: Վերջնական արտադրանքը կցուցադրվի հեռուստատեսությամբ, ինչպես նաև կթողարկվի 22 օրինակ կոմպակտ դիսկի տեսքով, որոնք կբաժանվեն խնդրով շահագրգիռ կառույցներին /նախարարություններ, միջազգային կառույցներ/:

բ) Իրավիճակի նկարագրություն

Ծխախոտը այն թույնն է, որի կործանարար ազդեցությունը ընդունված չէ նկատել: Ծխող մարդիկ, ընտրելով անառողջ կենսակերպ, իրենց ընտրությունը պարտադրում են նաև շրջապատին: Մարդիկ ծխում են թե՛ տանը՝ հարազատ չծխողների շրջապատում, թե՛ սրճարանում, թե՛ փողոցում՝ քայլելիս կամ կանգնած գրուցելիս, թե՛ տրանսպորտում (շատ հաճախ՝ վարորդները) և նույնիսկ դպրոցում ու դրա տարածքներում՝ երեխաների ներկայությամբ:

Մարդիկ կարծում են, թե ծխախոտը թուլացնում, հանգստացնում է նյարդերը, նպաստում է նիհարելուն: Պատանիների ու աղջիկների համար ծխելը մնում է ինքնահաստատման միջոց, և նրանք պատանեկան անհոգությամբ թունավորում են իրենց: Չծխող պատանիները նրանց շրջապատում համարվում են անհամարձակ, բարդությամբ լի, փորձում են, որքան էլ տհաճությամբ, հարմարվել միջավայրին:

Այնինչ հայտնի է, որ մաքուր միկոտինի 0,05 գրամը, ընկնելով մարդու արյան մեջ, կարող է սպանել նրան: Օրական 1 տուփ ծխախոտ ծխելու դեպքում տվյալ մարդու արյան անոթները մշտապես գտնվում են սպազմի մեջ: Ծխելն ազդում է նաև նյարդային համակարգի վրա, որի գործունեության խանգարումն իր հերթին բերում է գրեթե բոլոր օրգան-համակարգերի ֆունկցիաների խաթարմանը: Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալներով յուրաքանչյուր 6-րդ ընթացքում 1 ծխող է մահանում:

Ապացուցված է, որ ծխախոտից արտադրվում է 2լ. ծուխ, որի 50-60%-ը արտանետվում է մթնոլորտ: Ծխախոտի այրվող ծայրից դուրս եկող ծուխն ավելի խիտ է, ուրեմն և՛ ավելի թունավոր: Այդ է պատճառը, որ տարածքում գտնվող չծխողներն այնուամենայնիվ «պասիվ ծխողներ» են:

Առանձին զրույցներում թե՛ ծխողները, թե՛ չծխողները համաձայն են, որ ծխախոտը աննկատ բազմաթիվ խնդիրներ է առաջացնում: Սակայն առաջինները վճռականություն, իսկ երկրորդները երբեմն համարձակություն չունեն դրա դեմ պայքարելու:

գ) Ծրագրի գործողությունների օրացույց

Ժամկետ	Գործողություն	Մանրամասներ
Առաջին ամիս	“Չայ TV” հեռուստաընկերությամբ գովազդային հոլովակ տեղադրելու պայմանավորվածության ձեռքբերում: «Խանգարո՞ւմ է արդյոք ծխողը շրջապատողներին» թեմայով հարցում, զրույց-քննարկումների կազմակերպում «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի դպրոցներում:	Կպատվիրվի հարցման անցկացում և արդյունքների վերլուծությունը կքննարկվի զրույց-քննարկումների ժամանակ, որին կմասնակցեն նաև հրավիրված հոգեբան և սոցիոլոգ: Արդյունքները կհրապարակվեն www.mskh.am կայքում:

<p>Երկրորդ ամիս</p>	<p>Քարոզչական բուկլետների և պաստառների պատվիրում, դրանց տարածում: Նախապատրաստում հակաժխտատային երթի: Հակաժխտատային գովազդի նախապատրաստում՝ դերասանական խմբի հավաքում, միջոցների վարձակալություն:</p> <p>Դպրոցահասակ երեխաների ծխելու մասին հետաքննական ֆիլմի պատրաստում /սկիզբը/:</p>	<p>Երեխաների և նրանց ծնողների միջոցով Մալաթիա-Սեբաստիա համայնքի հասարակական վայրերում կտարածվեն բուկլետներ, կփակցվեն այն պաստառներ:</p> <p>Կպատրաստվեն բուտաֆորներ ու հագուստներ՝ գունեղ երթ կազմակերպելու համար, կմշակվի երթի երթուղին: Կհավաքվի գովազդային հոլովակի մասնակիցների խումբ, կմշակվի հոլովակի սցենարը:</p> <p>Կսկսվեն դպրոցահասակ երեխաների ծխելու մասին հետաքննական ֆիլմի նկարահանման աշխատանքները:</p>
<p>Երրորդ ամիս</p>	<p>Հակաժխտատային գովազդի պատրաստում և կայքում տեղադրում: Երթ՝ «Ես չեմ ուզում ծխել» կարգախոսով: Ծխախոտի վաճառքն անչափահասներին արգելող պաստառների տպագրություն և տարածում՝ երթի ընթացքում և հետագա մեկ շաբաթվա ընթացքում: Հակաժխտատային գովազդային հոլովակի պատրաստում:</p>	<p>Որպես քննարկումների արդյունք՝ կպատրաստվի և www.mskh.am կայքում կտեղադրվի հակաժխտատային գովազդ և երթի հրավեր, կանցկացվի երթը: Կբեմադրվի և կնկարահանվի գովազդային հոլովակը:</p>
<p>Չորրորդ ամիս</p>	<p>Գովազդային հոլովակի ցուցադրում հեռուստաընկերության եթերում:</p> <p>Կավարտվեն ֆիլմի նկարահանման աշխատանքները:</p> <p>Ծրագրի ամփոփում:</p>	<p>Գովազդային պատրաստի հոլովակը կքննարկվի աշխատող խմբում, կկատարվեն վերջին շտկումները, այնուհետև հոլովակը կհեռարձակվի «Հայ TV» հեռուստաընկերության եթերում՝ օրական երկու անգամ, 15 օր:</p> <p>Ֆիլմը կմոնտաժվի, կցուցադրվի հեռուստատեսությամբ, ինչպես նաև կփոխադրվի դիսկի վրա՝ 22 օրինակ:</p>

դ) Ծրագրի հիմնական մասնակիցները

Ծրագրի տնօրենը Գևորգ Չակոբյանն է, ով պատասխանատու է փաստաթղթերի հավաքման, պայմանագրերի կնքման ծրագրի ընդհանուր համակարգման և հաշվետվության համար: Ծրագրին մասնակցում է 4 ամիս:

Ծրագրի համակարգողը Չասմիկ Ղազարյանն է, ով կազմակերպում ու ղեկավարում է բոլոր աշխատանքները, բանակցություններ վարում թաղապետարանի և հեռուստաընկերության հետ, ձեռք բերում պայմանավորվածություններ: Ծրագրին մասնակցում է 4 ամիս:

ե) Ծրագրի բյուջեն

հհ	Բյուջեի հոդվածը	Միավորի արժեքը (ՀՀ դրամ)	Ընդհանուր արժեքը (ՀՀ դրամ)	ՓԴԾ-ից ակն կալվող գումարը (ՀՀ դրամ)	Այլ աղբյուրներից ներդրում (ՀՀ դրամ)
1	Աշխատավարձ				
1.1	ՀԿ-ի նախագահ	80 000*4	320 000	320 000	
1.2	Ծրագրի համակարգող	80 000*4	320 000	320 000	
1.3	Հ/ը հետ աշխատանքների համակարգող	80 000*2	160 000	160 000	
1.4	Հաշվապահ	60 000*4	240 000	240 000	
2	Ծրագրային ծախսեր				
2.1	Ձրույց-քննարկումների կազմակերպում «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի դպրոցներում, այդ թվում հրավիրված հոգեբանի և սոցիոլոգի հոնորար	120 000	120 000	120 000	
2.2	Բուտաֆորներ, հագուստներ, համապատասխան պատահաններ՝ բեմականացված երթ կազմակերպելու համար	150 000 110 000 100 000	360 000	360 000	
2.3	Գովազդային հոլովակի դեկորացիայի, հագուստի պատրաստում, բեմականացման ծախսեր, այդ թվում՝ կատարող խմբի և օպերատորի հոնորար	260 000	260 000	260 000	
2.4	Հեռուստաեթեր /հոլովակի տևողությունը՝ 30 վրկ., ռոպեի արժեքը՝ 6000 դրամ, 30 ցուցադրում/	6 000	90 000	90 000	
2.5	Գովազդի պատրաստում և տեղադրում www.mskh.am կայքում	30 000	30 000	30 000	

2.6	Սոցիալական անվտանգության մեկնաբանություն /մեկնաբանություն՝ աշակերտների և մեկնաբանների ուսուցիչների և ծնողների մասնակցությամբ/	350 000	700 000	700 000	
2.7	Անչափահասներին ծխախոտի վաճառքն արգելող պաստառների դիզայն, տպագրություն /A4, 300 օրինակ, գունավոր/	250 000	250 000	250 000	
2.8	Հակածխախոտային մակագրությամբ գրիչների և գրեմական պարագաների տպագրություն /500 երեխայի համար/	500 000	500 000	470 000	
2.9	Դպրոցահասակ երեխաների ծխելու մասին հետաքննական ֆիլմի պատրաստում, հեռարձակում	700 000	700 000	700 000	
3	Վարչական ծախսեր				
3.1	Գրասենյակի վարձակալություն	100 000*4	400 000		400 000
3.2	Կոմունալ ծախսեր, այդ թվում՝ հեռախոսակապ, էլ.էներգիա, ինտերնետ	50 000*4	200 000		200 000
3.3	Համակարգիչներ	300 000*2	600 000		600 000
3.4	Թվային ֆոտոխցիկ	200 000	200 000		200 000
3.5	Տրանսպորտի վարձակալություն	250 000	250 000	250 000	
3.6	Վառելիք	100 000	100 000	100 000	
4.	ՀեՁԿ ծախսերի փոխհատուցում	225 000	225 000	230000	
5.	Ընդամենը	4441250		4.600.000	

Ծրագրի տնօրեն՝ _____ Գ. Հակոբյան

Կ.Տ.